№ 145 Երեքշաբթի Դեկտեմբերի 23 **1886** Երեքշաբթի Դեկտեմբերի 23 № 145

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբլի։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունւում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ԱՌԱՋԻԿԱՑ 1887 ԹԻՒՆ

Կը հրատարակւի Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 րուբլի է, վեց ամսւանը 6 րուբլի։

Գրւել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնակայա և Բաղարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրւելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մի տարի Շվէյցարիայում.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Թատրօնասէրների մի խումբ պատրաստւում է այստեղ մի չարք ներկայացումներ տալ Գայիանեան օրիորդաց դպրոցի բեմի վրա։ Շուտով կը խաղան «Այր և նախապաշարմունք» և «Ռունի ամուսնութիւն» պիէսաները։

—

Դեռ նոյեմբերի 6-ին Կուբանի շրջանի Պօդմոգիլնի կայարանի մօտ, փօստը կողոպտվեցաւ, և տարվեցաւ 64 հազար րուբլի։ Այժմ յայտնվում է որ թէ կողոպտողը և թէ կառապանին սպանողը եղել է ինքը փօստատան ծառայողը, Գրաֆով ազգանունով, որ ուղեկցում էր փօստին նրա պահպանութեան համար։ Ինչպէս հաղորդում են «Кавказъ» լրագրին, Գրաֆովին արդէն ձերբակալել են, այս դեկտեմբեր ամսի 14-ին, Բօստովի երկաթուղու մի կայարանում և նրա մօտ գտան միայն հազար րուբլի։ Գործը յանձնված է դատաստանական քննիչին։

—

Տեղական ռուս լրագրները հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍՈՒՄ մտադրութիւն կայ շուտով բանալու դիւղատնտեսական բիւրօ։

—

Ստացանք դարձեալ մի քանի նամակներ ԲԱԳՈՒՒՑ, որոնց մէջ մեծ գովասանքով են խօսում պ. Կարա-Մուրզայի խմբերգական կօնցէրտների մասին։

—

Մեզ գրում են ՇՈՒԼԱՎԷՐԻՑ հետևեալը։ «Շուլավերը սկսում է սակաւ առ սակաւ անկարգ դրութեան մէջ ընկնել։ Բացի այգիների վազերը կորելու սովորութիւնից, տեղի են սկսում ունենալ նաև վաղեմի յանցանքները՝ այն է հացի և խոտի գէղերը հրդեհելը։ Նորերում Խ—ի խոտի գէղերը, տաս հատ սայլի չափ, անյայտ եղեռնագործներ գիշեր ժամանակ այրեցին։ Կրակը բարձրանում էր մինչև երկինքը։ Ապա չորս հատ անասուն էլ գոմից գողացան, Թռցրին։ Դրանից յետոյ անյայտ սրիկաներն էլ նորերում կրակ տուեցին երեք այգիներ, այրելով այգիների ցանկերն էլ (չափարները)։ Այդ աւազակների հետքն էլ մինչև այժմ գտնված չէ։ Շուլավերի խնամատար անձնատրութեանց ուշադրութիւնն ենք հրաւիրում այս չարը յանցանքների վրա»։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մի ոմն Աւետիս Յովհաննեանց ուղարկել է մեզ հետևեալ նամակը տպագրելու համար։ «Պարսկաստանում անտեսապէս հարստահարված հայերից շատերը, թողնելով իրանց տուն ու տեղը, գնում են օտար աշխարհ բաղդ որոնելու, փող աշխատելու։ Անտէր և անօգնական մնալով նրանց ծնողները, կանայք և որդիները ամէն մեծ թշուառութեան մէջ են ընկնում։ Այդ վիճակին ունեցող մի քանի ընտանիք ինձ են դիմել, որպէս զի իմանամ թէ արդեօք ձուլ են և ձր են դանվում հինգ վեց տարուց առաջ իրանց տանից բաժանված անդամները, որոնք իրանց ուր լինելը մի թղթի կտորով անգամ ծանուցում են իմացնել իրանց ազգականներին, նրանց վշտի ծանրութիւնը փոքր ինչ թեթևացնելու համար։ Կորած անձնատրութիւնները սրանք են. 1) Յովհան Մարգարեան Տէր-Մարտիրոսեանց, Սանդիբարան գիւղից, 2) Աւետիս Այվազեանց, Մուղան գիւղից, 3) Օհանջան Յովսէփեանց, Քրտէջի գիւղից և 4) Թիմրազ Պետրոսեան Տովլաթեանց, Խոզեան գիւղից։ Խնդրում եմ այն պարոններին, որոնք գիտեն թէ որտեղ են դանվում վերոյիշեալ անձնատրութիւնները, մի երկու տողով յայտնեն այդ մասին «Մշակ» լրագրի միջոցով»։

—

Պետերբուրգում կայացած նաւթային յանձնաժողովի անդամներին բաժանվեցաւ նաւթը տուրքի ենթարկելու նախագիծը։ Բացի նաւթագործների ներկայացուցիչը, որը մանակցում է Պետերբուրգում նաւթային յանձնաժողովի պարապմունքներին, հեռագրով հաղորդել է Բագուի նաւթագործներին այդ նախագիծը, որի բովանդակութեան մասին անցեալ անգամ յիշեցինք։ Դեկտեմբերի 16-ին Բագուի մէջ տեղի ունեցաւ նաւթագործների ընդհանուր ժողովը քննելու այդ նախագիծը։ Ժողովին ներկայ էին, ինչպէս հաղորդում է «Бак. Изв.» լրագիրը, մօտ քսան հոգի։ Ընդհանրապէս ժողովը աւելորդ համարեց քննելու այդ նախագիծը, նախ՝ այն հիման վրա, թէ քանի որ նաւթագործները սկզբունքով հակառակ են նաւթը տուրքի ենթարկելու մտքին, հարկաւորութիւն չը կայ այդ դէպքում մանրամասնութիւններ մտնելու մանրամասնութիւնների մէջ, և երկրորդ՝ իրանք նաւթագործների ներկայացուցիչները գիտեն թէ ինչ պէտք է ասեն այդ սկզբունքի պաշտպանութեան համար։ Ժողովը բաւականացաւ նրանով, որ վճռեց մի հեռագիր ուղարկել նաւթագործների ժողովի նախագահին, խնդրելով նրան՝ աշխատել, որ նաւթի վրա ակցիզ չը նշանակվի, որը, ինչպէս երեւում է ընթերցողի նախագծից, շատ ծանր կարող է լինել նաւթային արդիւնաբերութեան համար։

—

Դեկտեմբերի 20-ից ԲԱԳՈՒՒՑ մեզ գրում է մեր Թղթակիցը։ «Մարզասիրական ընկերութեան չինութիւնը, ուր դետեղված են երկսեռ դպրոցները և գրատունը, ամսիս 19-ին, լոյս շաբաթ, հրդեհի զոհ եղաւ։ Հրդեհը պատահում է գիշերուայ ժամի մէկին։ Վնասված է չինութեան մեծ մասը։ Գրատունը թէև ազատված է, բայց այնու ամենայնիւ փչացած և կորած գրքեր շատ կան։ Ուսումնարանի կայքից կրակի ճարակ են դառնում մի դասատան նստարանները, ինացածը պատահմամբ ազատվում, դրուած լինելով դուրսը, այն էլ չնորհիւ հետևեալ օրուայ պարահանդէսի, որ պիտի կայանար նոյն չինութեան մէջ յօդուտ գրադարանի։ Շինութիւնը, ուսումնարանի կայքը և գրատունը բոլորը ապահովագրած են, մօտ 10,000 ր։ Վնասը դեռ յայտնի չէ, թէ որքան է հասնում։ Ուսումը առժամանակ դադարեցնվում է մինչև նոր բնակարանի վարձելը. հաւանական է, որ հէնց արձակուրդներից յետոյ անմիջապէս սկսվի։ Ուսուցիչներից մէկը տեսնելով կրակը, իր թոյլ ձայնով սկսում է օգնութեան կանչել, որպէս զի դորանով թէ ոստիկաններին կանչի և թէ ժողովուրդին իմաց տայ եղելութեան մասին։ Ընկերութեան անդամներից շատերը լսելով այդ բոթը, չտապել էին հրդեհի տեղը և աշխատում էին հանգցնել տալ։ Հրդեհը հանգցվեցաւ հրաչէջների և ժողովրդի օգնութեամբ։ Հրդեհի պատճառները դեռ պարզված չեն»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դաւրէժ, դեկտեմբերի 9-ին

Ցայսնի է արդէն ընդհանուր աշխարհին թէ՝ Նապօլի, իսկ երրորդը՝ Լուցէրն։

—Բայց քանի որ ես չեմ տեսել ոչ կ. Պօլիս, ոչ էլ Նապօլի, պատասխանեցի ես, ես պատրաստ եմ վկայել որ Լուցէրն ամենաաքանչելի տեղն է ամբողջ Եւրօպայում։

Ձայս վերջացնելուն պէս ես մնաս բարև ասեցի երկու օրիորդներին, չնորհակալութիւն յայտնեցի նրանց իրանց սիրալիր ընդունելութեան համար և չտապեցի դէպի նաւահանգիստը։ Գովակը աւելի մեծ և աւելի փոթորկալի լինելով, քան թէ Ցիւրիխի հանգիստ ծովակը, չոգենաւերն էլ այստեղ աւելի մեծ են։ Նրանք իրանց ընդարձակութեամբ և յարմարութիւններով արդէն յիշեցնում են մեծ ծովերի չոգենաւերը։

Շոգենաւը չարժվեց։ Ծովակը հետզհետէ լայնանում էր։ Նրա սևագոյն և կարծես իւղի պէս թանձր ջրի ընդարձակ և հանդարտ մակերևոյթը արտափայլում էր արեգակի պայծառ ճառագայթներ։ Ամէն րոպէ տեսարանները փոփոխվում էին։ Ծովակի մէջտեղում նրա ջրի մակերևոյթի տարածութիւնը յանկարծ կրկնապատկվում, եռապատկվում է. ծովակի մակերևոյթի այդ յանկարծակի լայնանալը մի զարմանալի տպատրութիւն է գործում ճանապարհորդի վրա. չոգենաւը յանկարծակի մտնում է «Զորս կանտօնների» ծովակի այն տեղը, ուր այդ ծովակը մի մեծ և լայն խաչի ձև է կազմվում.... Ձեր ուշադրութիւնը աւելի և աւելի լարվում է. երկու կողմի ափերը աւելի և աւելի խիտ և վեհ տեսք են ընդունում։ Ծովակը հետզհետէ աւելի և աւելի լայնանում, հետզհետէ աւելի և աւելի ծովի կերպարանք է ըս-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՏԱՐԻ ՇՎԷՅՑԱՐԻԱՅՈՒՄ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Մնալ գրեթէ մի ամբողջ տարի գերմանական Շվէյցարիայում և չը տեսնել Հռենոսի հռչակաւոր ջրվէժը, նոյնպէս չը տեսնել իր գեղեցիկ դիրքով յայտնի Լուցէրն քաղաքը, իր հրաշալի ծովակով, որ «Զորս կանտօնների ծովակ» անունն է կրում,—դա անները լի կը լինէր։ Մանաւանդ դա անները լի կը լինէր Ցիւրիխում ապրող մի մարդու համար, քանի որ երկու վերոյիշեալ տեղերն էլ այդքան մօտ են Ցիւրիխից. առաջինը՝ այն է Հռենոսի ջրվէժը, երկաթուղով 4 ժամ հեռու է Ցիւրիխից, երկրորդը՝ Լուցէրն քաղաքը միայն երկու կամ $2^1/_2$ ժամ հեռու։

Վճռեցի նախ այցելել Լուցէրն և «Զորս կանտօնների ծովակը։»

Ես չէի պատմի իմ տպատրութիւնները Ցիւրիխից դէպի Լուցէրն երկաթուղով գնալու ժամանակ, չեմ նկարագրի երկու-ժամվայ ընթացքում իմ անցած երկրի գեղեցիկ բնութեան տեսարանները։ Բնութիւնը՝ Շվէյցարիայի որ կողմն էլ գընաք, ամէն տեղ գեղեցիկ է.... Ամէն տեղ նոյն նկարչական սարերը, նոյն խիտ և հարուստ, լաւ պահպանված անտառները, նոյն մշակված դաշտերը....

Երբ երկաթուղու գնացքը կանգնում է Լուցէրն քաղաքի կայարանում, և դուք իջնում էք վագոնից,—մի քանի տասնեակ քայլ անելուց յետոյ դուք արդէն գտնվում էք ծովակի ափում։ Ձեր աչքի առաջ բացվում է ծովակի սև գոյն ունեցող ջրի մի ընդարձակ մակերևոյթ, որի մի կողմ, անմիջապէս ջրի ափին, երեւում են բարձր սարեր, գրեթէ միշտ ձիւնով ծածկված գագաթներով, իսկ միւս կողմ տարածվում է նալի, կամ կիսաթոլորակի ձև ունեցող Լուցէրն քաղաքը։ Համնելով ծովակի ափին, դուք չարունակում էք ձեր ճանապարհը այդ ափերով, անցնում էք մի լայն կամուրջի վրայով որ չինված է այն դետի վրա, որ բղխում է ծովակից, և ահա դուք մտնում էք քաղաքը։ Այստեղից դուք կարող էք կամ քաղաքի խորքը մտնել, կամ դարձեալ չարունակել ձեր ճանապարհը ծովեզերեայ ծառուղիով, որի երկայնութեամբ կառուցված են գեղեցիկ չէնքեր՝ չքեղ վիլլաներ և հիւրանոցներ։

Ես դիտաւորութիւն ունէի միայն մի քանի ժամ անցնել Լուցէրնում, մի պտոյտ անել չոգենաւով ծովակի վրա և երեկոյեան կրկին վերադառնալ Ցիւրիխ։ Ինձ հարկաւոր էլ չէր իջնել մի հիւրանոցում, այլ միայն մի որ և է տեղ ճաշել։ Ես չէի ուզում գնալ թանգ հիւրանոցները, և այդ պատճառով մի յանձնարարական նամակ էի վերցրել Ցիւրիխի տանտիկնոջից դէպի իր երկու բարեկամուհի օրիորդներ, որոնք մի փոքրիկ էժան հիւրանոց, կամ աւելի լաւ է ասել բէստօրան էին պահում Լուցէրնում։ «Belle Vue» բէստօրանը, այդպէս էր անուանվում Իօստ քոյրերի բէստօրանը, գտնվում էր մի փոքրիկ և կոկիկ տան մէջ, ուղիղ ծովեզերեայ ծառուղիի վրա։ Ձը գիտեմ իմ ներկայացրած յանձնարարական նամակին վերագրեմ, թէ առհասարակ Լուցէրն քաղաքը էժանութեանը, բայց Իօստ օրիորդները լինձանից այնքան էժան վերցրին իմ ճաշիս համար, որ ես հաւատացած էի թէ այս կամ այն քան մոռացած կը լինէին հաշվել.... Եւ երբ ես այդ հարցն էլ առաջարկեցի նրանց, երկու բարեսիրտ օրիորդների բարձր ծիծաղը պատասխան եղաւ իմ հարցմունքին։ «Belle Vue» փոքրիկ բէստօրանը մի կատարեալ գոհարիկ էր իր մաքրութեամբ, իր ամէն յարմարութիւններով, տան առջև իր գեղեցիկ պարտէզով։ Այդ փոքրիկ տունը երկու յարկանի էր և վերևի յարկի բալկօնից բացվում էր մի հրաշալի տեսարան ծառուղիի վրա և ընդարձակ ծովակի վրա։ Մենք գտնվում էինք կիսաբոլորակ կազմող այդ քաղաքի իսկապէս մի կենտրօնական կէտում և Իօստ քոյրերի տան փոքրիկ պատշգամբից «Զորս կանտօնների» ընդարձակ ծովակը կլոր ձև ունէր։

—Ինչպէս էք գտնում մեր Լուցէրն քաղաքը, հարցրեց ինձ բէստօրանի տէր օրիորդներից մին։

—Հրաշալի է, օրիորդ, եղաւ պատասխանս։

—Լուցէրն քաղաքը, չարունակեց իմ խօսակից օրիորդը, բոլոր ճանապարհորդների վկայութեամբ, երրորդ տեղն է բռնում ամբողջ Եւրօպայում իր տեսարանների գեղեցկութեան կողմից։ Առաջինը համարվում է կ. Պօլիս, երկրորդ

Ա Ն Ա Ս Ե Ր Ի Ն

Ա Ն Ա Ս Ե Ր Ի Ն

Ա Ն Ա Ս Ե Ր Ի Ն

Ա Ն Ա Ս Ե Ր Ի Ն

ԺԳԱՎԱՆ ԴԱՍԸ

— Ֆօ՛ւյ, ասում է ծերունին, ես ինձ համար ոչ մի բան չեմ ուզում, միայն թե ինձ մի քանի տարի ևս կյանք տան, որ կարողանամ տեսնել իմ թոռնիկին ուսանող։

— Ինչո՞ւ ուսանող, հարցնում է նրան մի ուրիշը։

— Ես ուզում եմ, որ նա դառնա ուսուցիչ, ինչպես հայրը։

— Ինչո՞ւ ուսուցիչ

քը և ազգը, յարակցելով, որ այն ղինուորական կրթութիւնը, որը ստացել է ազգը, միապետի հոգատարութեան չնորհիւ, ամենաղօրեղ զրաւական է խաղաղութեան համար: Կայսրը զգացված խօսքերով չնորհակալութիւն յայտնեց և համբուրեց թագաժառանգին, ինչպէս և ֆելդմարշալ Մօլտկէին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 դեկտեմբերի: Գվխաւոր չտաբն փոխ-զնդապետ Զուեվ նշանակված է վիէննայի զինուորական դործակալ:

ՓԱՐԻԶ, 21 դեկտեմբերի: Հանրապետութեան նախագահը նոր տարվայ առիթով ընդունելով դիպլոմատական ներկայացուցիչներին, չնորհակալութիւն յայտնեց նրանց այն աջակցութեան համար, որ նրանք ցոյց տուին Ֆրանսիայի դէպի միւս պետութիւնները բարեկամական յարաբերութիւններ պահպանելու գործում, և յոյս յայտնեց, որ այնպիսի յարաբերութիւնները կը չարունակվին և ապագայում:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Դեկտեմբերի 19-ին

Ռուսաց 1 րուբլ Լօնդոնի վրա արժէ		$22^{11}/_{16}$	պէնս.
— — Համբուրգի վրա	—	$193^{1}/_{2}$	պֆ.
— — Փարիզի վրա	—	$238^{3}/_{4}$	սան.
Ոսկի — արժէ	— —	8 ›	77 կ.
Մաքսային կուպօններ	— . .	170 ›	50 ›
Ագծաթ — —	— . . .	1 ›	38 ›
Բօրսային դիակօնտներ	— . .	5 և	$6^{1}/_{2}$% ›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի		99 ›	87 ›
— — — — 2-րդ	—	99 ›	62 ›
— — — — 3-րդ	—	99 ›	50 ›
— — — — 4-րդ	—	99 ›	— ›
— — — — 5-րդ	—	99 ›	— ›
— — — — 6-րդ	—	99 ›	— ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.		99 ›	— ›
— — 2-րդ	—	99 ›	12 ›
— — 3-րդ	—	99 ›	37 ›
Նեղքին 5% առաջին փոխառութ.		244 ›	75 ›
— երկրորդ	—	227 ›	— ›
$5^{1}/_{2}$% բչնտա		104 ›	— ›
Ոսկեայ բչնտա		184 ›	75 ›
Նոր կօնսօլիդած փոխառութիւն . .		159 ›	— ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.		161 ›	— ›
$5^{1}/_{2}$% գրաւական թղթեր Թերսօնի կալուած. բանկի.		96 ›	75 ›
6% գրաւակ. թղ. Խարկօվի կալ. բան.		102 ›	50 ›
— — Պօլտավայի —	—	101 ›	— ›
— — Պետ.Տօլսկ. —	—	101 ›	— ›
— — Կիեվի —	—	101 ›	50 ›
— — Մօսկվայի —	—	102 ›	50 ›
— — Բեսարաբ. Տավր. —		101 ›	— ›
— — Նիժ. Սամար. —		101 ›	50 ›
— — Վիլնայի —		100 ›	75 ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.		96 ›	50 ›
— —Ռոստօվսկի-18 և 43 տ.		96 ›	50 ›
Վօլժսկո-Կամսկի բանկի ակցիաները		584 ›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.		269 ›	— ›
Րիբինսկ-Վօլգօվի ընկ.		98 ›	50 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.		94 ›	50 ›
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ .		94 ›	75 ›
Օդէսայի — — .		92 ›	87 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .		83 ›	50 ›
Նոր երկաթուղային բչնտա . .		98 ›	87 ›
Պետական բանկի 6-ղ հրատարակվեան տոմսերը		— ›	— ›
Գլաւ Թղ. Ագնս. բանկի . . .		99 ›	— ›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը չատ ամուր է:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՓՕԹԻ. Ա. Ա. Գասպ. եկող 1887 թվի «Մշակի» համարները ձեր ցանկութեան համեմատ կուղարկենք, իսկ բաժանորդագրութիւնը, ինչպէս խոստացնում էք, կարող էք և փետրվարին վճարել: Երբ մարդ ճշմարիտ անկեղծ կերպով ուզում է տարվայ ընթացքում վճարել, միայն այս բօզէիս չէ կարող, մենք այդ տեսակներին միշտ մեծ ուրախութեամբ ապառիկ ենք ուղարկում մեր թերթը, և յետաձգում ենք վճարը:

ԲԱԳՈՒ. Հայկունի. Ձեր յօդուածը «Գաղտնիք Ղարաբաղի» գրքի և նրա պատճառով ծագած բանակռւի առիթով, ստելու չենք: Մենք այդ հարցը սպառված ենք համարում և նոյն իսկ այդ մասին գրած մեր մշտական մի աշխատակցի յօդուածը չենք ստել: Մեր կարծիքով ամէն յարմար կը լիներ ձեղ զիմել այն չաբաթաթերթին և լրագրին, որոնք այդ հարցով զբաղված են:

ՇՈՒՇԻ. Լէօ. Ձեր պատկերները «Ծայրեր» վերնագրով չատ աջող էին: Այդ ձևի, բուն բէալական ուղղութեամբ պատկերներ, նոր երևոյթ են մեր գրականութեան մէջ: Ուրախ կը լինէինք եթէ միւս տարի էլ չարունակէիք: Երևում է որ ձիրք ունէք:

ԲԷՐԴԵԱՆՍԿ. Ց. Մ. Ց. Դ. Ափսոսում ենք որ ժամանակ չունենք ձեղ նամակ գրելու, բայց Կ. Պօլսի «Օրացոյցը» և սրա նման գրքերը միշտ կարող էք ստանալ Թիֆլիսի «Центральная Книжн. торговля» գրավաճառանոցից, որից կարող էք ամէն տեսակ բացատրութիւն էլ ստանալ: Գրքեր ծախելը գրավաճառանոցի փէշակն է, իսկ խմբագրութեան գործը չէ ամենևին ոչ գրքեր դէս ու դէն ուղարկել, ոչ էլ նրանց գնի մասին ամենքին մանատար նամակներով բացատրութիւն տալ:

ՊԻԱՏԻԳՕՐՍԿ. Լ. Ս. Ձեր ուղարկած 5 րուբլի հասցրինք «Արձագանքի» խմբագրութեանը:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՏՕՆԱՎԱՃԱՌԻ ՀԱՄԱՐ

Վ. ԳՐԻՎՆԱԿԻ ԴԵՂԱՆԻՒԹԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԸ ստացել է մեծ քանակութիւն ընծաների (զարդարանքների և առհասարակ այն բոլոր պարագաների) որոնք անհրաժեշտ են ձքեղ և արժան տօնածառեր սարքելու համար:—Օտարաքաղաքացիների համար կայ պատրաստի սարք թէ՝ փոքր և թէ՝ մեծ տօնածառերի համար, 5 րուբլիից մինչև 150 րուբլի արժողութեամբ, որպիսիները անյապաղ կարող են ուղարկվել ցանկացողներին:—Վառող թելեր, տնային բենգալական կրակներ և մանկական հրախաղութիւններ շատ ապրժան գներով:

4—5

Საყოველ-კვირაო სალიტერატურო ჟ სათეატრო გაზეთი

ᲘᲛ ᲔᲫᲒᲠᲘᲘ

მიიღება ხელის მოწერა 1887 წლისათვის

(წელიწადი მესამე)

პროგრამა გაზეთი „თეატრი“-სა იგივე დარჩება, რაც 1886 წ. იყო.

„თეატრი“ გამოვა კვირაში ერთხელ, კვირაობით.

ფასი „თეატრი“-სა: წლით—5 მანეთი, ნახევარის წლით—3 მანეთი.

სხვა ვალით ხელის მოწერა არ მიიღება.

ხელის მოწერა მიიღება მხოლოთ „თეატრი“-ს რედაქციაში.

ადრესი: Тифлисъ. Въ редакцію газеты „Театръ“.

ՀԵՌԱԳԻՐ

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակութեանը, որ ՄԱԴԱԹԵԱՆ կղզու վրա կառուցված նոր շինութեան մէջ, չուտով բացվելու է ՄԵԾ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԱՆՈՑ, որ բաղկացած է աշխարհիս ամեն երկիրներից բերված ամենաշատիր և ամենագեղեցիկ տեսակների բազմաթիւ կենդանիներից և գազաններից, որոնց թւում կան գիշատիչ, մակեր, խոտակեր, կրծող, ստղոն կենդանիներ, նոյնպէս կապիկներ, կրօկոդիլներ, օձեր և զանազան տեսակների թռչուններ: Բացի դրանից, կենդանանոցի մէջ լինելու է ԿԱՊԻԿՆԵՐԻ, ՇՆԵՐԻ, ՊՕՆԻՆԵՐԻ (փոքրիկ ձիերի) և ԱՅԾԵՐԻ թատրօն: կենդանանոցի մէջ գանվում է և ՎԱՐԺՎԱԾ ՓԻԼԸ:

Ներկայացման օրվայ մասին կը յայտնվի առանձին յայտարարութիւններով:

Թիֆլիսի հասարակութեանը իմ յարգանքներս մատուցանելով մնամ

կառավարիչ կենդանանոցի Ֆ. Ի. ՖԷՅՑ

4—10

DAS ECHO

IN BERLIN

Ist die beste und billigste Wochenschrifft für Deutsche im Auslande. DAS ECHO bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Vorgänge, welche sich in Deutschland und im Auslande abspielen. DAS ECHO ist kein Parteiblatt, sondern es lässt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen. DAS ECHO bringt in jeder Numer eine oder zwei abgeschlossene Novelleten, Erzählungen etc, aus der Feder bewährter Schriftsteller.

DAS ECHO will somit seinen Landsleuten im Auslande ein ‹Bote aus der Heimat› sein, deshalb ist auch sein Abonnementspreis ein sehr nidriger.

Die Expedition in Berlin S. W. versendet DAS ECHO nach allen zum Weltpostverein gehörigen Ländern für 4 Mark 30 Pf. vierteljährlich. In Russland kostet DAS ECHO durch die Post oder die Buchhandlungen bezogen jährlich 6 Rubel. Mit Versendung ins Innere oder mit Post versendung von Berliu aus 8 Rubel jährlich. 2—3

„ԱՂԲԻՒՐ“

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Հինգերորդ տարի)

Առաջիկայ 1887 թվից „ԱՂԲԻՒՐԸ“ կը հրատարակվի նոյն ուղղութեամբ, անհամեմատ շքեղ, քան նախորդ տարիները:

„ԱՂԲԻՒՐԻ“ տարեկան բաժանորդագինը 3 րուբլի է, անբաժան են դրանից և պրեմիաները, որոնց գինն է 2 րուբլի, ուրեմն „Աղբիւր“ ստանալ կամեցողները պէտք է ուղարկեն թէ „ԱՂԲԻՒՐԻ“ տարեկան բաժանորդագինը և թէ պրեմիաների վճարը, ընդամենը 5 րուբլի:

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“ *իսկ արտասահմանից* Tiflis, Rédaction du journal „Agbur“.

Խմբագիր-Հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ 2—3

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒԼՏՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ



ՄԵՆ ԵՒ ՓՈՒՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի $^{1}/_{4}$ արժէ 60 կ.:

Հեղուկ բաղնիքների դէմ: Սրուակի գինը, վրձինով միասին 1 րուբլի:

Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի: Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գանվում էվ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Զուբալօվի տանը: 33—100

ՆՈՐ ԳԻՐՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԻԶՈՒՈՎ)

ՀՈԳԱՑԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՎԲԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 շրջան: Գինը 35 կ: Թիֆլիսի գրավաճառանոցներում: 10 աւելի առնողներին 20% զիջումն կը լինի կենտրոնական գրավաճառանոցում: 4—30

ՏՕՆԱԾԱՌԻ ՀԱՄԱՐ

Մեծ ընտրութիւն կարդնից չինած զեղատեսիլ իրերի, բազմերանգ մամուռի և զարդարանքների: Վառող թելեր, մագնի, պարաֆինային մոմեր, բազմատեսակ մոմակալներ, զանազանագոյն լապտերներ:

ԲԵՆԳԱԼԵԱՆ ԿՐԱԿՆԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՀՐԱԽԱՂՈՒԹԻՒՆ.

Օ-դը-կօլօն, և հոտաւէտ օծանելիք զեղեցիկ սրուակներում: Մեծ քանակութեամբ զանազան կօսմետիական և վարսաւիրական ապրանքներ, ռուսաց և արտասահմանեան գործարաններից:

«ՎԱՐԺԱՐԱՆ»

մանկավարժական ամսագրի I և II տարվայ բոլոր համարները վաճառվում են պ. Գ. Շահրուդաղեանի մօտ: Երկու տարվայ համարները միասին 5 րուբլի: Օտարաքաղաքացիք դիմում են այս հասցէով—Тифлисъ, Григорію Шахбудагянцу. Аббасъ-Абатская площадь, соб. домъ, № 8.

3—3

ՔՕԿՕԼԱԴ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.

(Ц. 4857.) 44—50 (6)

ԵՂԲԱՐՑ ՔՕՎԵԱՆՕՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՑԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

(Սիօնի փողոց, քարվանսարայ Անանօվի)

ՎԱՃԱՌՈՒՄ Է *խաղաղատումնակները* I և II *փոխառութեան և* ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ Է 50 կոպ. *հատը:* 10 *տոմսակից աւելին* 45-ԿՈՊ. ՀԱՏԸ. 20 *տոմսակից աւելին՝* 40 ԿՈՊ. ՀԱՏԸ:

6—7 (6. շ.)

Дозволено цензурою, Тифлисъ 22 Декабря 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.